## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ շրջանավարտներ, հարգելի՛ ուսուցիչներ, ծնողներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ «Վերջին զանգի» գեղեցիկ տոնի առթիվ: Այս օրը խորհրդանշում է մի կարևոր ավարտ և միաժամանակ՝ նոր ճանապարհի սկիզբ: Դպրոցական տարիները ձեզ համար եղել են գիտելիքների, ընկերության, ձեռքբերումների և հիշարժան պահերի ժամանակաշրջան, որոնք միշտ կմնան ձեր հիշողություններում: Սիրելի՛ շրջանավարտներ, այսօր դուք կանգնած եք նոր ընտրությունների և հնարավորությունների շեմին: Վստահ եմ, որ ձեր գիտելիքներով, նպատակասլացությամբ և աշխատասիրությամբ կկարողանաք հաղթահարել բոլոր դժվարությունները և արժանապատվորեն կառուցել ձեր ապագան՝ նպաստելով նաև մեր համայնքի և հայրենիքի զարգացմանը: Խորին երախտագիտություն եմ հայտնում ուսուցիչներին՝ տարիների նվիրված աշխատանքի, համբերության և սերունդներ կրթելու պատասխանատու առաքելության համար: Շնորհակալություն նաև ծնողներին՝ իրենց հոգատարության, աջակցության և անսահման նվիրումի համար:
Թող այս օրը դառնա նոր հաղթանակների, մեծ նպատակների և լուսավոր ապագայի սկիզբ: